



NEW VENTURE  
BROKERAGE

«ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՔԵՐԻՉ» ՓԲԸ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ  
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ


**«ՆՅՈՒ ՎԵՆՉՈՒՐ ԲՐՈՋԵՐԻՋ»  
ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ**

Հաշվետվություն ֆինանսական արդյունքի մասին

*Հազար ՀՀ դրամ*

<b>ԱՆՎԱՆՈՒՄ</b>			<b>01.10.24- 31.12.24</b>	<b>01.01.24- 31.12.24</b>	<b>01.10.23- 31.12.23</b>	<b>01.01.23- 31.12.23</b>
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>	<i>6</i>	<i>6</i>
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	2,771	7,555	-	-	
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,221)	(6,723)	(1,199)	(1,199)	
<b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>		<b>1,550</b>	<b>832</b>	<b>(1,199)</b>	<b>(1,199)</b>	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	329,744	669,893	-	-	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(52,615)	(124,299)	(1,347)	(1,523)	
<b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>		<b>277,129</b>	<b>545,594</b>	<b>(1,347)</b>	<b>(1,523)</b>	
Եկամուտ շահաբաժիններից	5	-	-	-	-	
Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից	6	20,708	44,783	(3,207)	(3,207)	
Այլ գործառնական եկամուտ	7	5	14	-	589	
<b>Գործառնական եկամուտ</b>		<b>299,392</b>	<b>591,224</b>	<b>(5,753)</b>	<b>(5,340)</b>	
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստնորի պահուստներից	8	-	-	-	-	
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(159,273)	(440,340)	(74,684)	(88,535)	
Այլ գործառնական ծախսեր	10	(9,887)	(47,554)	(5,417)	(21,820)	
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)	11	-	-	-	-	
<b>Շահույթ (վնաս) մինչև հարկումը</b>		<b>130,232</b>	<b>103,330</b>	<b>(85,854)</b>	<b>(115,695)</b>	
Շահութահարկի գծով ծախս (Եկամուտ)	12	(7,998)	40,404	(19,860)	(19,860)	
<b>Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)</b>		<b>138,230</b>	<b>62,926</b>	<b>(65,994)</b>	<b>(95,835)</b>	
Այդ թվում՝		-	-	-	-	
Մայր կազմակերպության բաժնեմաս		-	-	-	-	
Չվերահսկվող բաժնեմաս		-	-	-	-	
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	
Այլ համապարփակ եկամուտներ		-	-	-	-	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՍՏԱՊԱՐՓԱԿ ԵՎԱՍՏՈՒՏԵՐ</b>		<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	
Այդ թվում՝		-	-	-	-	
Մայր կազմակերպության բաժնեմաս		-	-	-	-	
Չվերահսկվող բաժնեմաս		-	-	-	-	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	13	-	-	(0.000)	(0.000)	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	13	-	-	(0.000)	(0.000)	

Մարիաննա Մովսեսյան  
Գործադիր տնօրեն



Գայանե Վարդանյան  
Գլխավոր հաշվապահ



15 հունվարի 2025


Հաշվետվություն ֆինանսական դրության մասին

ԱՆՎԱՆՈՒՄ		Հազար ՀՀ դրամ	
		առ 31.12.2024	առ 31.12.2023
<b>1</b>	<b>Ակտիվներ</b>		
1.1	Անկախիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	
1.2	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	75,478
1.3	Պահանջներ հաճախորդների նկատմամբ	16	148,873
1.4	«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	17	83,276
1.5	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	18	372
1.6	Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ	19	72,637
1.8	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	21	146,423
1.9	Հետաձգված հարկային ակտիվներ	22	6,091
1.10	Դեբիտորական ակտիվներ և այլ ակտիվներ	23	36,474
	<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>569,624</b>
<b>2</b>	<b>Պարտավորություններ</b>		
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	-
2.2	Հաճախորդների նկատմամբ պահանջներ	25	40,724
2.3	«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորություններ	26	56,297
2.4	Ընկերության կողմից թողարկված արժեթղթեր	27	-
2.5	Հետաձգված հարկային պարտավորություններ	28	-
2.6	Պահուստներ	29	9,781
2.7	Պարտավորություններ վարձակալության գծով	30	34,731
2.7	Այլ պարտավորություններ	30	98,999
	<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>		<b>240,533</b>
<b>3</b>	<b>Սեփական կապիտալ</b>		
3.1	Կանոնադրական կապիտալ	31	362,000
3.2	Էմիսիոն եկամուտ	32	-
3.3	Պահուստներ՝		-
3.3.1	Գլխավոր պահուստ		-
3.3.2	Վերազնահատման պահուստներ		-
3.4	Զբաղյալված շահույթ (վնաս)	35	(32,909)
3.5	Սեփական կապիտալի այլ տարրեր	32	-
	<b>Ընդամենը՝ սեփական կապիտալ</b>		<b>329,091</b>
	<b>Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>569,624</b>
			<b>352,051</b>

Մարիաննա Մովսեսյան

Գործադիր տնօրեն

15 հունվարի 2025



Գայանե Վարդանյան

Գլխավոր հաշվապահ




Հաշվետվության սեփական կապիտալում փոփոխությունների մասին


Հազար ՀՀ դրամ

Տեփական կապիտալի տարրերի անվանումը	Հազար ՀՀ դրամ						
	1	2	3	4	5	6	7
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7
<b>Նախորդ համարների միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)</b>							
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվար 2023թ.	-	-	-	-	-	-	-
11. Բաժնետերերի (սեփականատերերի) նեո գործադրներ բաժնետոմսերի (բաժնետոմսերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-	-	-	-
12. Շնորհանք համապարփակ եկամուտ	362,000	-	-	-	-	-	362,000
14. Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-
16. Շահաբաժնի հայտարարում	-	-	-	-	-	-	-
8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի համարների միջանկյալ ժամանակաշրջանի վերջում 31 դեկտեմբերի 2023թ.	362,000	-	-	-	-	(95,835)	266,165
<b>Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)</b>							
9. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվար 2024թ.	362,000	-	-	-	-	(95,835)	266,165
11. Բաժնետերերի (սեփականատերերի) նեո գործադրներ բաժնետոմսերի (բաժնետոմսերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-	-	-	-
12. Շնորհանք համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	-
14. Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
Հատկացումներ գլխավոր պահուստին	-	-	-	-	-	-	-
16. Շահաբաժնի հայտարարում	-	-	-	-	-	-	-
17. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31 դեկտեմբերի 2024թ.	362,000	-	-	-	-	(32,909)	329,091

Մարիաննա Մովսեսյան  
Գործադիր տնօրեն



Գայանե Վարդանյան  
Գլխավոր հաշվապահ



15 հունվարի 2025

Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

Դեկտեմբերի 31-ին ավարտված եռամսյակի համար

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<b>01.01.24-31.12.24</b>	<b>01.01.23-31.12.23</b>
<b>1. Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		
<i>Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i>	(416,568)	(108,154)
Ստացված տոկոսներ	572	-
Վճարված տոկոսներ	-	-
Ստացված կոմիսիոն գումարներ	303,448	(1,524)
Վճարված կոմիսիոն գումարներ	(393,077)	-
Արտարժույթի առք ու վաճառքի օգուտ (վնաս)	25,462	(1,629)
Արտարժույթի առք ու վաճառքի գործունեությունից ելքեր մուտքեր		
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)		-
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(339,924)	(34,801)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(13,049)	(70,200)
<i>Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</i>		-
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում), այդ թվում՝	266,810	-
Փոխառությունների նվազում (ավելացում)	(20,352)	-
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		-
Այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում)	-	-
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	-	-
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում (նվազում)	319,635	-
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)	(32,473)	-
<i>Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը</i>	<b>(149,758)</b>	<b>(108,154)</b>
Վճարված շահութահարկ	-	-
<b>Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>(149,758)</b>	<b>(108,154)</b>
<b>2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումների նվազում (ավելացում)	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(10,207)	(18,362)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	-
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	-	-
<b>Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>(10,207)</b>	<b>(18,362)</b>
<b>3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		
Վճարված շահաբաժիններ	-	-
Ստացված փոխառությունների գուտ ավելացում (նվազում)	-	-
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		362,000
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից	(41,348)	(8,614)
<i>Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</i>	<b>(41,348)</b>	<b>353,386</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	<b>(3,987)</b>	<b>73</b>
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</i>	(205,300)	226,943
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	226,943	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	<b>21,643</b>	<b>226,943</b>

## 1. Ընդհանուր դրույթներ

«Նյու Վենչուր Բրոքերիջ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2023 թվականին: 2023թ. հուլիսի 25-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ի կողմից որպես ներդրումային ընկերություն, և ստացել է ներդրումային ծառայությունների մատուցման թիվ 0028 լիցենզիան:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Մարիաննա Մովսեսյանը: Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեությունը ենթարկվում է արտաքին աուդիտի:

Կարգավորող մարմինները բազմաթիվ ձևերով վերահսկում են Ընկերության գործունեությունը, և կարող են իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Մյս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառնությունները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

Ընկերության բաժնետերերն են Գրիգորի Տրուկինը և Վաչագան Գրիգորյանը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2025թ. հունվարի 15-ին:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

### 2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

### 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

#### ա) Արտարժույթով գործարքները

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հողավածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես գուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող գուտ օգուտի կամ վնասի տարր:

**բ) Տոկոս**

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

**գ) Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ**

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով: Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, գեղջերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

**դ) Վճարներ և կումիսիոն ծախսեր**

Վճարները և կումիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

**ե) Ֆինանսական գործիքներ**

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական ակտիվներ.** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» (ԻԱՇԿՎ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են, և
- սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող`

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման` ակնկալվող պարտքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորուստի մոդելի համաձայն` պետք է ճանաչվի պարտքային կորուստի գծով պահուստ` հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով: ԱՊԿ-ը պարտքային կորուստների` հավանականություններով կշռված գնահատական է: Դա չափվում է որպես դրամական պակասուղի (պայմանագրի համաձայն Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հուսքերի միջև տարբերություններ, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք` զեղչված արդյունավետ տոկոսադրույքով:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

**Ֆինանսական պարտավորություններ.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

**ԻԱՇԿՎ ֆինանսական պարտավորություններ.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՇԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե`

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ



● այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Առվորական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չպահվող, եթե՝

● նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝

● ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

● այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չպահվող:

ԻԱՇԿՎ չպահվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

**Այլ ֆինանսական պարտավորություններ.** այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գուտ հաշվեկշռային արժեքին:

**Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

### Հիմնական միջոցներ

#### 1. Ճանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ գործարքի հետ կապված ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը գուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

### *2. Հետագա ծախսումներ*

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

### *3. Մաշվածություն*

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա 1-3 տարի

Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ 3 -8 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

### *Ոչ նյութական ակտիվներ*

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են: Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային հաշվապահական ծրագիր և այլ ոչ նյութական ակտիվներ 5 տարի

Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը, արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հողվածների մարման արդյունքում, կամ, երբ դրամային հողվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է սովյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվների վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ 23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող օգուտները (կորուստները) ճանաչելով սովյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ՝ ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում: «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը և վաճառված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի (ներառյալ՝ իրական արժեքով ճշտումները) տարբերությունը ներկայացվում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ներդրումների առուվաճառքից զուտ եկամուտ:

ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ տոկոսային ծախսերի կազմում:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Արտարժույթի առուվաճառքի եկամուտներ և ծախսեր՝ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից ստացված զուտ շահույթը (վնասը) ներկայացվում է որպես առևտրային գործունեությունից զուտ շահույթի կամ վնասի կազմում:

Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից (եկամուտից) և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամուտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում: Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ տարվա հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումները: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխությունների արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

**Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ**

<b>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</b>	<b>01.10.24- 31.12.24</b>	<b>01.01.24- 31.12.24</b>	<b>01.10.23- 31.12.23</b>	<b>01.01.23- 31.12.23</b>
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	2,692	7,476	-	-
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	79	79	-	-
<b>Ընդամենը</b>	<b>2,771</b>	<b>7,555</b>	-	-
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	-	-	-	-
Այլ տոկոսային ծախսեր	(1,221)	(6,723)	(1,199)	(1,199)
<b>Ընդամենը</b>	<b>(1,221)</b>	<b>(6,723)</b>	<b>(1,199)</b>	<b>(1,199)</b>
<b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>	<b>1,550</b>	<b>832</b>	<b>(1,199)</b>	<b>(1,199)</b>

**Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր**

<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</b>	<b>01.10.24- 31.12.24</b>	<b>01.01.24- 31.12.24</b>	<b>01.10.23- 31.12.23</b>	<b>01.01.23- 31.12.23</b>
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից	10,479	40,152	-	-
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	-	-	-	-
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից	309,635	615,638	-	-
Պահառության գործունեությունից	-	1,333	-	-
Այլ ծառայությունների մատուցումից եկամուտ	9,630	12,770	-	-
<b>Ընդամենը</b>	<b>329,744</b>	<b>669,893</b>	-	-
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</b>	<b>01.10.24- 31.12.24</b>	<b>01.01.24- 31.12.24</b>	<b>01.10.23- 31.12.23</b>	<b>01.01.23- 31.12.23</b>
Միջնորդավճարների գծով ծախս	(52,615)	(124,299)	(1,347)	(1,523)
<b>Ընդամենը</b>	<b>(52,615)</b>	<b>(124,299)</b>	<b>(1,347)</b>	<b>(1,523)</b>
<b>Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ</b>	<b>277,129</b>	<b>545,594</b>	<b>(1,347)</b>	<b>(1,523)</b>

**Ծանոթագրություն 5. Եկամուտ շահաբաժիններից**

<b>Շահաբաժիններ</b>	<b>01.10.24- 31.12.24</b>	<b>01.01.24- 31.12.24</b>	<b>01.10.23- 31.12.23</b>	<b>01.01.23- 31.12.23</b>
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	-	-	-	-

**Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից**

<b>Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից</b>	<b>01.10.24-31.12.24</b>	<b>01.01.24-31.12.24</b>	<b>01.10.23-31.12.23</b>	<b>01.01.23-31.12.23</b>
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	32,871	0	0
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(2,037)	(25,261)	-	-
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>(2,037)</b>	<b>7,610</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>Արտարժույթային գործառնություններից</b>	<b>01.10.24-31.12.24</b>	<b>01.01.24-31.12.24</b>	<b>01.10.23-31.12.23</b>	<b>01.01.23-31.12.23</b>
Արտարժույթի առ ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	18,867	35,771	(1,629)	(1,629)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	3,878	1,402	(1,578)	(1,578)
<b>Ընդամենը</b>	<b>22,745</b>	<b>37,173</b>	<b>(3,207)</b>	<b>(3,207)</b>
<b>Ընդամենը զուտ եկամուտ (ծախս) առևտրային գործառնություններից</b>	<b>20,708</b>	<b>44,783</b>	<b>(3,207)</b>	<b>(3,207)</b>

**Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ**

Ընկերությունը այլ գործառնական եկամուտներ հաշվետու ժամանակաշրջանում չի ունեցել:

**Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**

<b>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով</b>	<b>01.10.24-31.12.24</b>	<b>01.01.24-31.12.24</b>	<b>01.10.23-31.12.23</b>	<b>01.01.23-31.12.23</b>
<b>Պահուստի սկզբնական մնացորդ</b>				
Պահուստին կատարված մասհանումներ				
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-	-
<b>Պահուստի վերջնական մնացորդ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>

**Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր**

